

ԳԱՅԱՆԵ ԽԱՉԻԿԻ ՂԱԶԱՐՅԱՆ

Ծննդյան տարեթիվ՝ 29.09.1992
Ծննդավայր՝ ՀՀ Արարատի մարզ, քաղաք Վեդի

Պատմական գիտությունների թեկնածու **Գայանե Խաչիկի Ղազարյանը** Վեդի քաղաքում միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո՝ **2009** թվականին, ընդունվել է Հայկական պետական մանկավարժական համալսարանի (ՀՊՄՀ) «պատմության և իրավագիտության ֆակուլտետ»-ի «պատմություն» բաժինը, որն ավարտել է **2013** թվականին։

2013-2015 թվականներին եղել է ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի (ԳԿՄԿ) «Պատմության, քաղաքագիտության և միջազգային հարաբերությունների ամբիոն»-ի մագիստրանտ։

2018-2025 թվականներին եղել է ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի հայցորդ

2025 թվականին պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն «Հայրենադարձները Խորհրդային Հայաստանի առօրյա կյանքի համատեքստում (1946-1953 թթ.)» թեմայով (գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Կ. Հ. Խաչատրյան)։

2015 թվականից աշխատում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում՝ ընդհանուր պատմության բաժնում՝ սկզբում որպես ավագ լաբորանտ, այնուհետև՝ կրտսեր գիտաշխատող։

2025 թվականից մինչ օրս դասախոսում է Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Հասարակական գիտությունների ամբիոնում։

Գիտական հետաքրքրությունները ներառում են Խորհրդային Հայաստանի առօրեականության պատմության հիմնահարցերը։